



CLEAN ENERGY
SOLUTIONS

In association with



Առաջադրանք 3 – Կենսազանգվածի մատակարարման գնահատում
 Առաջադրանք 4 – Օժանդակության և վերապատրաստման
 դասընթացների անհրաժեշտության համառոտ նկարագրություն
 Առաջադրանք 5 – Արդյունքների ցուցանիշների սահմանում
 Փաստահավաք՝ Հայաստանի Հանրապետությունում «ԳՀՀ/GAF –
 Վերականգնող էներգիայի ծրագրի– V փուլ»-ի համար

Պատվիրատու
KfW



Document date

14.06.2022



CES clean energy solutions GesmbH
 Schönbrunner Strasse 297, 1120 Vienna, Austria
 T +43 664 6016 9546, F +43 1 521 69-180
 z.bacelic@ic-ces.at
 www.ic-ces.at
 FN 320442p
 EN ISO 9001 | EN ISO 14001

Ցանկ

Ծրագիր	52x210128
Պատրաստվել է՝	CES clean energy solutions GesmbH Zlatko Bacelic Medic Schönbrunner Strasse 297, A-1120 Vienna Phone: +43 664 6016 9546 Fax: +43 1 521 69-180 E-Mail: z.bacelic@ic-ces.at
Պատրաստվել է՝	KfW Christine Ziß Palmengartenstrasse 5-9, 60325 Frankfurt am Main, Germany +49 69 7431-1508 Christine.Ziss@kfw.de
Ամսաթիվ	14.06.2022

Ամսաթիվ	Տարբերակ No.	Խմբագրվել է	Ստուգվել է	Հաստատվել է
01.06.2022	Rev. 0	Ali, Akh	Bac	Bac
14.06.2022	Rev. 1	Ali, Akh	Bac	Bac

1.	Ամփոփ բովանդակություն.....	4
2.	ԿԵՆՍԱԱՆԳՎԱԾԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ և ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ	6
2.1.	ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ	7
2.2.	Պոտենցիալ կենսազանգվածի ծրագրի տեղանքներ 1 և 2 – Մպայկա ՍՊԸ (Երևան).....	11
2.3.	ՊՈՏԵՆՑԻԱԼ ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔ 3 – ԱՐԱՔՍ ԹՌՉԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱ	13
2.4.	ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.....	16
3.	ԿԵՆՍԱԳԱԶԻ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱՆՔԸ	18
3.1.	ԱՐԱՔՍ ԹՌՉԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱ.....	18
4.	ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ	25
4.1.	ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	25
4.2.	ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ԼՈԳԻՍՏԻԿԱ	29
4.3.	ԿԵՆՍԱԳԱԶԻ ԿԱՅԱՆ.....	31
4.4.	ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՈՂՆԵՐ	36
4.5.	ԷՆԵՐԳԻԱՅԻ և ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ.....	38
5.	ՆԱԽԱՀԱՇԻՎ	40
5.1.	Կապիտալ ծախսեր (CAPEX).....	40
5.2.	Գործառնական ծախսեր (OPEX).....	42
6.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	44
6.1.	ԳՆԵՐ և ՄԱԿԱԳՆԵՐ	44
6.2.	ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	45
7.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	49
7.1.	ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՏՎՅԱԼՆԵՐ ՖԵՐՄԱՆԵՐԻՑ	37
7.2.	ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ՏՎՅԱԼՆԵՐ ՋԵՐՄՈՑՆԵՐԻՑ	41
7.3.	ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ՆԱԽԱԿԱՆ Բ&Ս ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	44
7.4.	ՀԱՎԵԼՎԱԾ 4 –ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ (SU)	44
7.5.	ՀԱՎԵԼՎԱԾ 5 – ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇ(ներ).....	46

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1 – Կենսագազի պոտենցիալ ծրագրեր	13
Աղյուսակ 2 – Ծրագրի համեմատություն	14
Աղյուսակ 3 – Ծրագրի համար առկա հումք	21
Աղյուսակ 4 – Հումքի գիտական վերլուծություն	22
Աղյուսակ 5 – Innio Jenbacher J312 CHP կայանների նումինալ տվյալներ	23
Աղյուսակ 6 – Կենսագազի կայանի կենսազանգվածի հաշվեկշիռը	26
Աղյուսակ 7 – Կենսագազի կայանի էներգետիկ հաշվեկշիռը	27
Աղյուսակ 8 – Արաքս ֆերմայի էներգետիկ հաշվեկշիռը ծրագրի իրականացումից հետո	27
Աղյուսակ 9 – Ծրագրի կապիտալ ծախսերի /CAPEX/ հաշվարկ՝ համակցված ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրություն /CHP/	28
Աղյուսակ 10 – Ծրագրի կապիտալ ծախսերի /CAPEX/ հաշվարկ – կենսագազի ուղիղ օգտագործում	29
Աղյուսակ 11 – Ծրագրի գործառնական ծախսերի /OPEX/ գնահատում (կենսագազի կայան համակցված արտադրությամբ/ CHP)	30
Աղյուսակ 12 – Ծրագրի գործառնական ծախսերի /OPEX/ գնահատում (կենսագազի կայան կենսագազի ուղիղ օգտագործմամբ)	30
Աղյուսակ 13 – Կենսագազի կայանի ծախսարդյունավետության վերլուծություն /էլեկտրական և ջերմային համակցված արտադրությամբ/ (առանց դրամաշնորհի)	32
Աղյուսակ 14 – Կենսագազի կայանի ծախսարդյունավետության վերլուծություն /էլեկտրական և ջերմային համակցված արտադրությամբ/ (30% դրամաշնորհի)	33
Աղյուսակ 15 – Կենսագազի/ ուղիղ օգտագործման/ կայանի ծախսարդյունավետության վերլուծություն	34
Աղյուսակ 16 – Կենսագազի/ ուղիղ օգտագործման/ կայանի ծախսարդյունավետության վերլուծություն (30% դրամաշնորհի)	35

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 1 – Հայաստանի կենսազանգվածի մատակարարման և էներգիայի պահանջարկի ներուժը	5
Նկար 2 – նտրված ֆերմաների վայրերը	7
Նկար 3 – Գոմաղբի քանակը	7
Նկար 4 – Ընտրված ջերմոցների տեղանքները	8
Նկար 5 – Կենսազանգվածի մնացորդներ–ջերմոցներ	9
Նկար 6 – Պոտենցիալ ծրագրի տեղանք 1 (Սպայկա –երևան) և տեղամաս 2 (Սպայկա – Արտաշատ) կոորդինատները	10
Նկար 7 – Ծրագրի պոտենցիալ տեղանք 3 – Արաքս	11
Նկար 8 – Արաքս թոչնաբուծական ֆերմայի գտնվելու վայրը (ձախից) և օդային լուսանկարը	15
Նկար 9 – Արաքս թոչնաբուծական ֆերմայի կողմից արտադրված հավի ձվի և մսի փաթեթներ	16
Նկար 10 – Արաքս ֆերմայի էներգիայի պահանջարկի բաշխումը	16
Նկար 11 – տեղանքում գտնվող 500կՎտ արևային էլեկտրակայան	17

Նկար 12 – Գազի ուղիղ մատակարարմամբ ջեռուցիչներ (օրինակ)	18
Նկար 13 – Նախկին կոյուղաջրերի վերամշակման կայան (ձախից) և պինդ թռչնաղբի պահեստարան (աջից).	20
Նկար 14 – Կենսազազի կայանի համար նախատեսված հողատարածքի նկարներ	20
Նկար 15 – Կենսազազի կայանի սխեմատիկ պատկեր (աղբյուր՝ Կենսազազի ուղեցույց, էջ 62)	23
Նկար 16 – Պոտենցիալ ծրագրի նախագիծ.	24
Նկար 17 – Տարածքի տաք ջրով ջեռուցման համակարգերի օրինակներ.....	26

1. Ամփոփ րովանդակություն

Կենսազանգվածի շուկայի գնահատման հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանում առկա կենսազանգվածի ծրագրերը: Նախորդ առաջադրանքների ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան ոլորտները և դրանցում առկա ներուժը: Այս առաջադրանքի նպատակն է բացահայտել Հայաստանում իրագործելի կենսազանգվածի ծրագրերը:

Այս ծրագրի մարտահրավերներից է կենսազանգվածի արտադրության համար համապատասխան ռեսուրսների հատկացումը, քանի որ գյուղատնտեսական հողերը և բուսական թափոնները հիմնականում օգտագործվում են արտադրական նպատակներով կամ վաճառվում են այլ ֆերմերներին/արդյունաբերական ոլորտներին: Հայաստանում ծրագրի իրականացման ևս մեկ խնդիր է հանդիսանում էներգիայի մշտական պահանջարկ ունեցող սպառողների բացահայտումը: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք գյուղատնտեսական տնտեսություններ և ջերմոցներ, որոնք հետագայում ընտրվել են որպես ոլորտի պոտենցիալ մատակարարներ, ինչպես նաև արտադրվող էներգիայի սպառողներ:

Այս առաջադրանքի շրջանակում բացահայտվել և գնահատվել են երեք պոտենցիալ կենսազանգվածի նախագծեր: Արդյունքում, ծրագրի իրականացման համար որպես ամենահեռանկարային է ընտրվել Երևանից դեպի արևմուտք Արաքս թոչնաֆաբրիկայի տարածքում գտնվող կենսազանգվածի կայանը: Արաքս թոչնաֆաբրիկան համարվում է Հայաստանի ամենամեծ թոչնաֆաբրիկաներից մեկը, որը հետաքրքրված է հետագա հետազոտություններ անցկացնելու համար:

Ծրագրի հայեցակարգը թոչնաղբի անաերոբ միաձուլումն է բուսական թափոնների հետ կենսազանգվածի արտադրության նպատակով: Ներկայումս Արաքս ֆաբրիկայի թոչնաղբը վաճառվում է որպես պարարտանյութ: 30 կմ հեռավորության վրա գտնվող ջերմոցից առաջացող և տեղում կուտակվող բուսական թափոնները դիտարկվում են որպես պոտենցիալ լրացուցիչ հումք կենսազանգվածի կայանի համար: Ներկա հայեցակարգով համակցված ջերմային և էլեկտրական կայանում արտադրվելու և սպառվելու է 2,6 ՄՎտ կենսազանգված: Կայանում արտադրվելու է մոտ 7200 ՄՎտ/ժ էլեկտրաէներգիա, որը սնելու է էլեկտրական ցանցը: Բացի այդ, արտադրվելու է մոտ 4300 ՄՎտ/ժ ջերմություն, որը կարող է օգտագործվել տեղում՝ թոչնանոցների ջեռուցման նպատակով, ինչի համար ֆերմայի ջեռուցման համակարգում անհրաժեշտ կլինեն փոփոխություններ, որոնք ներառված են ծրագրում: Վերջում, կենսազանգվածի կայանի արտադրական մնացորդները հնարավոր կլինի վաճառել որպես պարարտանյութ: Որպես այլընտրանք, դիտարկվել է ավելի փոքր կենսազանգվածի կայանի տարբերակը՝ թոչնաբուծական ֆերմա (առանց համակցված էներգիայի արտադրության) ուղիղ գազամատակարարման համար:

ջերմային էներգիայի արտադրությունը/CHP/, գնահատվում է մոտ 3,9 մլն եվրո: Շահագործման արժեքը գնահատվում է 210.000 եվրո/տարի: **Ջերմության մակարդակի արժեքը** (LCOH) հաշվարկվել է 40 եվրո/ՄՎտժ, իսկ ներքին եկամտաբերության դրույքաչափը (IRR)՝ 2,7%՝ առանց դրամաշնորհի: Դրամաշնորհի 30%-ը ներառյալ՝ ջերմության մակարդակի արժեքը (LCOH) կազմում է 38 եվրո/ՄՎտժ, իսկ ներքին եկամտաբերության դրույքաչափը (IRR)՝ 5,9%: Բացի այդ, այս ծրագիրը կրճատում է CO₂-ի արտանետումները տարեկան 3990 տոննայով ¹:

¹ նախատեսված արտանետումների գործակիցը 433 գ/կՎտժ էլեկտրաէներգիայի համար և 204 գ/կՎտժ բնական գազի համար

2. ԿԵՆՍԱԿԱՆԳՎԱԾԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ և ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ


Ծրագրի առաջին փուլում բացահայտվել և քարտեզագրվել են էներգիայի պոտենցիալ սպառողները և կենսազանգվածի մատակարարները: Այսպիսով, վառելիքի պոտենցիալ մատակարարներ են համարվում հետևյալ ոլորտները՝

- Հացահատիկի արտադրությունից գոյացող և չօգտագործվող ծղոտ
- Ջերմոցներ
- Անասնաբուծական, ոչխարաբուծական և թռչնաբուծական ֆերմաներ

Բացի այդ, ջերմային էներգիայի պոտենցիալ սպառողներ են համարվում հետևյալ ոլորտները՝

- Մսի արտադրությունը
- Կաթի վերամշակման արտադրությունը
- Մրգի և բանջարեղենի արտադրությունը
- Գարեջրի արտադրությունը

Բացահայտվել են նաև արդյունաբերական և առևտրային ոլորտների էներգիայի հիմնական սպառողները: Բոլոր հայտնաբերված և ընտրված տեղանքները ներկայացված են ստորև նկարում:



Նկար 1 – Հայաստանի կենսազանգվածի մատակարարման և էներգիայի պահանջարկի ներուժը

2.1. ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ


Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը շատ բազմազան է, սակայն փոքրամասշտաբ է, բացառությամբ որոշ ճյուղերի, որոնք բավականաչափ զարգացած են, իսկ արտադրությունը՝ ավտոմատացված: Այսպիսով, հարցումների և ուղիղ հեռախոսակապի միջոցով ընտրվել և հարցազրույցներ են անցկացվել 11 ջերմոցների և 18 տնտեսությունների հետ:

2.1.1. Ֆերմաներ

Կենսազանգվածի մատակարարման և ջերմության սպառման պոտենցիալի որոշման նպատակով անցկացվել են հարցումներ հետևյալ գյուղատնտեսական ֆերմաների հետ՝


- Ագրոհոլդինգ Հայաստան ՍՊԸ
- Փորքփրոդ ՍՊԸ
- Վլադիմիր Հակոբյանի անվան համակցված կերի գործարան
- Ագրոտեխնիվեստ ՍՊԸ
- Եղեգնուտ ՍՊԸ և գնդեվազ ՍՊԸ
- Լուսակերտ էլիտ ՍՊԸ
- Վարիանտ գրուպ ՍՊԸ
- Արաքս թռչնաբուծական ֆերմա ՓԲԸ
- "Արգնու թռչնաբուծական, անասնաբուծական և խոզաբուծական ֆերմա ԲԲԸ"
- Բանդիվան կաթ ՍՊԸ
- Սպիտակի թռչնաֆերմա ՍՊԸ
- Շահումյանի թռչնաֆաբրիկա ՓԲԸ
- Աշտարակ ձու ՍՊԸ
- Գետամեջի թռչնաֆաբրիկա 2016 ՍՊԸ
- Լուսակերտ էլիտ
- 6 փոքր անասնաբուծական ֆերմա Կոտայքի մարզում

Ստորև քարտեզը ներկայացնում է հաստատված գյուղացիական տնտեսությունների գտնվելու վայրը Հայաստանում:



Նկար 2 – Հայաստանում հաստատված ֆերմաների գտնվելու վայրերը

Գոմաղբի ընդհանուր քանակը կազմում է տարեկան մոտ 136000 տոննա: Առկա քանակը ըստ ընկերությունների ներկայացված է ստորև նկարում:



Նկար 3 – Գոմաղբի քանակը


Յուրաքանչյուր ընկերությանն ուղարկված հարցաթերթիկները, ինչպես նաև դրանց պատասխանները կարելի է գտնել սույն հաշվետվության հավելվածում:

2.1.2. Ջերմոցներ

Ջերմոցային ոլորտի առկա կենսազանգվածի ներուժը որոշելու համար ընտրվել են հետևյալ ջերմոցները՝


- Սպայկա ՄՊԸ
- Գրին ֆերմեր ՄՊԸ
- Էկոլանդ ՄՊԸ
- Գրին ֆուդ ՄՊԸ
- Գրին հաուս ՄՊԸ
- Էկո ֆրուիթ ՄՊԸ

Հաստատված ջերմոցների կոորդինատները ներկայացված են ստորև քարտեզի վրա:



Նկար 4 – Հաստատված ջերմոցների տեղանքները

Ընդամենը 3 ընկերություններ արձագանքել և հետաքրքրվել են կենսազանգվածի մատակարարմամբ: Պարզվել է, որ առկա ներուժը կազմում է տարեկան մոտ 20,000 տոննա: Արդյունքները ներկայացված են ստորև նկարում:




Նկար 5 – Վենսագանգվածի մնացորդներ-ջերմոցներ

2.2. Պոտենցիալ կենսազանգվածի ծրագրի տեղանքներ 1 և 2 – Սպայկա ՍՊԸ (Երևան)

2.2.1. Ծրագրի իրականացման տեղանքները

«Սպայկա» ՍՊԸ-ն լուրջ և վարունգ է աճեցնում մոտ 60 հա տարածք ունեցող ջերմոցներում, որոնք գտնվում են Երևանում: «Սպայկա» ՍՊԸ-ի տարածքում կկառուցվի կենսազազի կայան: Ստորև նկարում նշված է կենսազանգվածի ծրագրի հնարավոր տեղանք 1-ի գտնվելու վայրը:

«Սպայկա» ՍՊԸ-ն Արարատի մարզի Արտաշատ քաղաքում լուրջ և վարունգ է աճեցնում մոտ 55 հա մակերեսով ջերմոցներում: Ստորև նկարում պատկերված է կենսազանգվածի ծրագրի հնարավոր տեղանք 2-ի գտնվելու վայրը:



Նկար 6 – Պոտենցիալ ծրագրի տեղանք 1 (Սպայկա –Երևան) և տեղանք 2 (Սպայկա – Արտաշատ) կոորդինատները

Ջերմոցները ներկայումս ջեռուցվում են բնական գազով աշխատող կաթսաներով: Սպայկայի (Երևան և Արտաշատ) գազի ընդհանուր սպառումը կազմում է մոտ 3 միլիոն մ³ 2019 թվականին և 3.6 միլիոն մ³ 2020 թվականին: Անհրաժեշտ գազի սպառումը մասամբ կփոխարինվի կենսազազի կայանում արտադրվող ջերմությամբ:

2.2.2. Կենսազանգվածի մատակարարման տարբերակներ

Կենսազազի արտադրության համար անհրաժեշտ հիմնական ռեսուրսները առաքվում են «Սպայկա» ՍՊԸ-ից: Լուրջ և վարունգի աճեցումը ենթադրում է օրգանական թափոնների զգալի քանակություն: Թափոնների քանակը, հիմնականում տերևների և բույսերի մնացորդներ, գնահատվում է 130-150 տ/հա սահմաններում: Ներկայումս այս քանակությունը կոմպոստացվում է և չի օգտագործվում: Ընկերությունն օգտագործում է հանքային պարարտանյութեր բույսերի համար և հետևաբար կարող է տրամադրել

Թափոնները անվճար:

Լրացուցիչ կենսազանգվածի մատակարարման համար անհրաժեշտ են մատակարարման այլ աղբյուրներ: Նուբարաշենի «Էրեբունի» թոչնաբուծական ֆերման սկսել է գործել 2010 թվականից և ունի 14 թոչնանոց՝ շուրջ 245 հազար հավով: Տարեկան արտադրական հզորությունը կազմում է մոտ 2000 տոննա թոչնամիս: Ներկայումս կառուցվել են ձվի արտադրության համար նախատեսված 4 նոր թոչնանոցներ: Կենդանական թափոնները պահեստավորվում են տեղում և հասանելի են օգտագործման համար: Հավերի տարեկան հաշվարկված թոչնադրը կազմում է 39000 տ: Հեռավորությունը մինչև պոտենցիալ կենսազազի կայան 19-24 կմ է՝ կախված կենսազանգվածի ծրագրի տեղանքից:


Այդ տարածքում գտնվող կենսազանգվածի երկրորդ մատակարարման աղբյուրը **Variant** թռչնաբուծական ֆերման է: «**Variant Group**»-ը Նորամարզ գյուղում գործող թռչնաբուծական ֆերմա է, որն ունի մոտ 50 հազար հավ: Ֆերմայի թռչնաղբի տարեկան քանակը մոտ 2300 տոննա է: Ներկայումս այդ թափոնները որպես պարարտանյութ վաճառվում են գյուղատնտեսական այլ ձեռնարկություններին: Հեռավորությունը ֆերմայից մինչև պոտենցիալ կենսագազի կայան կազմում է մոտ 12-21 կմ՝ կախված պոտենցիալ կենսազանգվածի ծրագրի տեղանքից:

Լրացուցիչ կենսազանգված կարող է մատակարարել նաև «Արաքս» թռչնաֆաբրիկան՝ Հայաստանի թռչնամիս և ձու արտադրող առաջատար ձեռնարկությունը՝ շուրջ 654230 հավով: Ներկայումս թափոնները պահվում են աղբավայրերում և վաճառվում այլ տնտեսություններին: Ըստ միջին հաշվարկների թռչնաղբի տարեկան քանակը գնահատվում է մոտ 30.000 տ: Ֆերմայի հեռավորությունը մինչև կենսագազի պոտենցիալ կայանի տեղանքներ համապատասխանաբար 44 կմ-ից մինչև 30 կմ է:

2.3. ՊՈՏԵՆՑԻԱԼ ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔ 3 – ԱՐԱՔՍ ԹՈՂՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱ

2.3.1. Ծրագրի տեղանք

Պոտենցիալ կենսազանգվածի ծրագրի երրորդ տեղանքը Արաքս թռչնաբուծական ֆերման է, որը գտնվում է Ջրարբիում, Արմավիրի մարզ: Ֆերմայում բուծվում է մոտ 655 հազար թռչուն: Ստորև նկարում ներկայացված է պոտենցիալ կենսազանգվածի ծրագրի 3 տեղանքը:



Նկար 7 – Ծրագրի պոտենցիալ տեղանք 3 – Արաքս

Ներկայումս ջերմությունը արտադրվում է գազի կաթասյի և գազի տաքացուցիչների Առաջադրանք 3 – Կենսազանգվածի մատակարարումների գնահատում

Առաջադրանք 4 – Ուսանելի աջակցության և դասընթացների համառոտ նկարագրություն

Առաջադրանք 5 – Արդյունքների ցուցանիշների որոշում

միջոցով: Ընկերության բնական գազի սպառումը 2020 թվականին կազմել է 1,5 մլն մ³: Գազի սպառումը կնվազի ծրագրի իրականացման արդյունքում:

2.3.2. Կենսազանգվածի մատակարարում

Կենսազանգվածի հիմնական քանակը կտրամադրի Արաքս թոչնաֆարրիկան: Ներկայումս ֆերմայի թափոնները պահվում են աղբավայրերում, կամ վաճառվում են այլ ֆերմաների: Ըստ միջին հաշվարկների թոչնաղբի տարեկան քանակը գնահատվում է մոտ 30. 000 տ:

Ավելին, Երևանում գտնվող Եղեգնուտ ՄՊԸ թոչնաբուծական ֆերման, որտեղ բուծվում է մոտ 108.000 թոչուն, կարող է լինել հավելյալ կենսազանգվածի մատակարար, որտեղ ավելի քան 3.000 տոննա թոչնաղբ է գոյանում և վաճառվում գյուղատնտեսական ֆերմաներին և մասնավոր ընկերություններին՝ որպես պարարտանյութ:

Variant Group-ը և **Spayka**-ն, որոնք ներկայացվել են նախորդ հատվածում, գտնվում են այդ տարածքի հարևանությամբ (հեռավորությունը մոտ 30կմ) և նույնպես կարող են դիտարկվել որպես կենսազանգվածի պոտենցիալ մատակարարներ:

2.4. ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրերի համեմատությունը կատարվել է ըստ տեխնիկական ներուժի հաշվարկի՝ հիմնվելով ներկայացված տվյալների վրա: Այդ տվյալների, ինչպես նաև որոշ ծրագրերի համար հաշվարկված կենսագազի ներուժի ամփոփումը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1 – Պոտենցիալ կենսագազի ծրագրեր

Ա	2019	2020	Potential Project	2019	2020	3	2019	2020
Waste supply								
Vegetable waste								
Supplier 1								
Name	Spayka LLC (Yerevan) Tomato and cucumber		Spayka LLC (Artashat) Tomato and cucumber					
Annual amount of waste	7.800 t/a		7.150 t/a					
Type of waste	Tomato and cucumber		Tomato and cucumber					
Distance	0 km		0 km					
Cost of transport	0 AMD		0 AMD					
Current utilisation	composting		composting					
Fertilizer	mineralic		mineralic					
Price of waste	0 AMD		0 AMD					
total cost of waste	0 AMD		0 AMD					
spec. Cost [EUR/MWh]	0 EUR/MWh		0 EUR/MWh					
Supplier 1								
Name	Spayka LLC (Artashat) Tomato and cucumber		Spayka LLC (Yerevan) Tomato and cucumber					
Type of waste	Tomato and cucumber		Tomato and cucumber					
Distance	27 km		27 km					
Cost of transport	17.678.571 AMD		19.285.714 AMD					
Current utilisation	composting		composting					
Fertilizer	mineralic		mineralic					
Price of waste	0 AMD		0 AMD					
total cost of waste	17678571 AMD		19285714 AMD					
spec. Cost [EUR/MWh]	12 EUR/MWh		12 EUR/MWh					
Total amount from vegetables								
TS	14.950 t/a		14.950 t/a					
oTM	12.693 t/a		12.693 km					
Gas production	11.258 t/a		11.258 km					
CH4	4.503.317 Nm ³ /a		4.503.317 Nm ³ /a					
Energy	2.431.791 Nm ³ /a		2.431.791 Nm ³ /a					
Produced heat	24.172 MWh/a		24.172 MWh/a					
Produced electricity	8.158 MWh/a		8.158 MWh/a					
		6.526 MWh/a		6.526 MWh/a				
Livestock waste								
Supplier 2								
Name	"Erebuni" Nubarashen Poultry factory		"Erebuni" Nubarashen Poultry factory			Arax Poultry Farm CJSC		
Annual amount of waste	30.000 t/a		30.000 t/a			30.000 t/a		
Type of waste	Poultry		Poultry			Poultry		
Distance	19 km		24 km			3 km		
cost of transport	67.857.143 AMD		85.714.286 AMD			6.889.785 AMD		
Current utilisation						storage, disposal, selling		
Fertilizer						organic waste		
Price of waste						0 AMD/t		
total cost of waste	67.857.143 AMD		85.714.286 AMD			6.889.785 AMD		
spec. cost [EUR/MWh]						1 EUR/MWh		
Supplier 3								
Name	"VARIANT GROUP" POULTRY FARM LLC		"VARIANT GROUP" POULTRY FARM LLC			Yeghegnut LLC		
Annual amount of waste	2.300 t/a		2.300 t/a			3.000 t/a		
Type of waste	Poultry		Poultry			Poultry		
Cost of transport	2.527.473 AMD		4.423.077 AMD			2.197.802 AMD		
Current utilisation	Fertilizer		Fertilizer			storage, disposal, selling		
Fertilizer						organic waste		
Price of waste	0 AMD/t		0 AMD/t			0 AMD/t		
total cost of waste	2.527.473 AMD/t		4.423.077 AMD/t			2.197.802 AMD/t		
spec. cost [EUR/MWh]	5 EUR/MWh		9 EUR/MWh			4 EUR/MWh		
Supplier 4								
Name			Arax Poultry Farm CJSC					
Annual amount of waste			30.095 t/a					
Type of waste			Poultry					
Cost of transport			121.260.212 AMD					
Current utilisation			storage, disposal, selling					
Fertilizer			organic waste					
Price of waste			0 AMD/t					
total cost of waste	0 AMD/t		121.260.212 AMD/t					
spec. cost [EUR/MWh]			20 EUR/MWh					
Total amount from Poultry								
FM	41.300 t/a		71.395 t/a			33.095 t/a		
oTM	6.195 t/a		10.709 t/a			4.964 t/a		
Gas production	4.646 t/a		8.032 t/a			3.723 t/a		
CH4	348.779 Nm ³ /a		602.927 Nm ³ /a			279.484 Nm ³ /a		
Energy	226.706 Nm ³ /a		391.903 Nm ³ /a			181.664 Nm ³ /a		
Produced heat	2.253 MWh/a		3.896 MWh/a			1.806 MWh/a		
Produced electricity	761 MWh/a		1.315 MWh/a			1.219 MWh/a		
	608 MWh/a		1.052 MWh/a			488 MWh/a		

Հիմնվելով այս էներգետիկ հաշվեկշռի վրա որոշ ծրագրերի համար հաշվարկվել են բիոգազի արտադրության համար առանձին հումքի ծախսերը: Արդյունքները ներկայացված են ստորև՝

Ծրագրի անվանում	1		2		3	
	<i>Մաքիլա ՄՊԸ(երևան) լույն և վառուեզ</i>		<i>Մաքիլա ՄՊԸ(Արտաշատ) լույն և վառուեզ</i>		<i>Արաքս թոչնաֆաբրիկա ՓԲԸ</i>	
Էլեկտրաէներգիայի և ջերմության սպառում	14.294.740ՄՎտ/տ 299.725 մՎտ/տ	15.686.074 ՄՎտ/տ 363.474 ՄՎտ/տ	14.294.740 ՄՎտ/տ 299.725 ՄՎտ/տ	15.686.074ՄՎտ/տ 363.474ՄՎտ/տ	20.975ՄՎտ/տ	15.529 ՄՖտ/տ
Ջերմատակարարման մատրասվիք	3,0%	2,5%	3,2%	2,6%	5,8%	7,8%
Պաշարների ընդհանուր արժեքը կոնկրետ պաշարների արժեքը	70.384.615 դրամ 7.892 դրամ/ՄՎտժ 13,9 եվրո/ՄՎտժ		211.397.575դրամ 22.316 դրամ/ՄՎտժ 39,3 եվրո/ՄՎտժ		9.087.587 դրամ 7.456դրամ/ՄՎտժ 13,1 եվրո/ՄՎտժ	


Աղյուսակ 2 –Ծրագրի համեմատություն

Հանդիպումների ընթացքում գնահատվել են ծրագրին առնչվող քննարկումների և ընկերությունների կողմից ծրագրին մասնակցության արդյունքները: Այդ հանդիպումների ընթացքում ծրագրի իրականացման նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերել Արաքսը, ոչ թե «Մպայկան»: Բացի այդ, Արաքսը Հայաստանում թոչնամսի ամենախոշոր արտադրողներից է, և հետևաբար էներգիայի մեծ պահանջարկ ունի: Այս փաստարկների հիման վրա Արաքս թոչնաբուծական ֆերմայի տարածքում կենսագազի կայանը դիտարկվել է հետագա հետազոտությունների անցկացման համար:

3. ԿԵՆՍԱԳԱԶԻ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱՆՔԸ

3.1. ԱՐԱՔՍ ԹՈՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱ

Արաքսը հայկական թոչնաբուծական ֆերմա է, Արմավիրի մարզի Ջրարբի համայնքում, որը գտնվում է Երևանից մոտ 38 կմ արևմուտք: Մարզը գտնվում է Հայաստանի արևմտյան մասում՝ Արարատյան դաշտում: Այն հարավից և արևմուտքից 72 կմ երկարությամբ սահման ունի Թուրքիայի հետ: Մարզի գլխավոր քաղաքը Արմավիրն է, իսկ ամենամեծ քաղաքը՝ Վաղարշապատը²:



Նկար 8 – Արաքս թոչնաբուծական ֆերմայի գտնվելու վայրը (ձախից) և օդային լուսանկարը

Արմավիրը Հայաստանի ամենափոքր մարզն է, ունի 1,242կմ² մակերես (երկրի ամբողջ տարածքի մոտ 4.2%–ը):



Արաքս թոչնաբուծական ֆերման ստեղծվել է 1997 թվականին Ջրառատ թոչնաֆաբրիկայի բազայի վրա, որը խորհրդային տարիներին Հայաստանի ամենամեծ թոչնաբուծական ֆերման էր: Ջրառատ թոչնաֆերման վերաբացվել է 2001 թվականին՝ X-Group-ի կազմում միավորվելուց հետո:

Ընկերությունը մեծ աշխատանք է կատարել արտադրության ծավալները վերականգնելու, ինչպես նաև Հայաստանում Cobb բրոյլերների նոր տեսակի զարգացման ուղղությամբ: Խոշոր ներդրումների շնորհիվ արդեն 2002 թվականին գործարանն արտադրել և իրացրել է 1600 տոննա հավի միս և մսամթերք:

Արտադրական հզորությունը թույլ է տալիս թոչնաբուծական ֆերմայում իրականացնել արտադրական ամբողջ գործընթացը՝ օրական մեկ մայր ձագի բուծումից մինչև բրոյլերի կաշվի վաճառք, ինչպես նաև ձվի արտադրություն:

Բրոյլեր մայր թռչունը պահվում է գերմանական սարքավորումներով հագեցած թռչնատներում՝ բրոյլեր թռչուններից առանձին: Գործարանը շահագործում է վերջերս ձեռք բերված հոլանդական ինկուբատոր սարքավորումները:

² www.wikipedia.org

Բրոյլերները մորթվում են թռչնաբուծական ֆերմայում, որի հզորությունը կազմում է ժամում 3500 հաս: Միսը պահվում է սառնարանում: Բացի հավի մսից, ֆերմայում արտադրվում է ձու և կիսաֆարրիկատ թռչնամթերք: Ընկերությունը համագործակցում է բազմաթիվ արտասահմանյան և տեղական կազմակերպությունների հետ՝ ձեռք բերելով կերային հումք, հավելումներ և սարքավորումներ³:

Ընկերությունը տեղական շուկայում ներկայացված է տարբեր ապրանքանիշերով, ինչպիսիք են Ջրառատ, Երևանի թռչնաբուծական ֆերմա, Տեղական, Նատուր ֆուդ: Հավի միսն ու ձուն արտադրվում են հիմնականում “Eco” ապրանքանիշով:




Նկար 9 – Արաքս թռչնաբուծական ֆերմայի կողմից արտադրված հավի ձվի և մսի փաթեթներ

Ֆերմայի ընդհանուր հողատարածքը կազմում է 205 հա: Թռչնանոցները և մնացած շինությունները զբաղեցնում են տարածքի մինչև 50%-ը:

3.2. ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՅԻ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՁԱՐԿՐ

Ընկերության կողմից օգտագործվող հիմնական էներգիայի աղբյուրները բնական գազն ու էլեկտրաէներգիան են: Արաքս ֆերմային տարեկան անհրաժեշտ է մոտ 1.8 մլն մ³ բնական գազ և 4.5 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Էլեկտրաէներգիայի պիկային սպառումը կազմում է մոտ 1,5 մՎտMW, իսկ գազը՝ 12մՎտ MW (0,7 միաժամանակյա գործակցով): Բնական գազը հիմնականում օգտագործվում է թռչնատների ներքին ջեռուցման և կենցաղային տաք ջրի համար:



Նկար 10 – Արաքս ֆերմայի էներգիայի պահանջարկի բաշխումը

³ www.xgroup.am

Վերջին 3 տարվա ընթացքում ամսական ֆիքսված էներգիայի պահանջարկը ցույց է տալիս ամբողջ տարվա էլեկտրաէներգիայի հաստատուն պահանջարկը: Ջերմային պահանջարկը կախված է արտաքին ջերմաստիճանից՝ ամսական մոտ 340 ՄՎտժ հաստատուն պահանջարկով (450 կՎտ):

3.2.1. Էլեկտրաէներգիայի սպառում

Էլեկտրաէներգիան ներկայումս օգտագործվում է տեղում ջրամատակարարման, լուսավորության, մեխանիզացիայի շահագործման, սպանդանոցի սարքավորումների և այլ նպատակներով: Կենսագազի կայանում էլեկտրաէներգիա արտադրելու դեպքում, այն կմատակարարվի էլցանցին, իսկ մնացած մասը կսպառվի տեղում:

Ցանցի հզորությունը միացման կետում 504 կՎտ է: Լարումը՝ 10 կՎ (ֆերմայի տարածքում տեղակայված են տասնհինգ 10 կՎ ենթակայաններ): Էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը կազմում է 42 դրամ/կՎտժ (0,08 եվրո/կՎտժ), իսկ գիշերային սակագինը՝ 32 դրամ/կՎտժ (0,061 եվրո/կՎտժ): Պիկային բեռնվածությունը 1500 կՎտ է: Պահուստային դիզելային էներգիայի գեներատորների ընդհանուր դրվածքային հզորությունը 1300 կՎԱ է:

Ֆերմայի տարածքում տեղակայված են երկու ՖՎ էլեկտրակայաններ՝ էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու համար: 500 կՎտ դրվածքային հզորությամբ մեկ ՖՎ էլեկտրակայանը ինտեգրված է պետական էլցանցին՝ երկկողմ էլեկտրաէներգիայի հաշվիչով: Փոխհաշվառման/ net-metering/ համակարգը թույլ է տալիս ապահովել սեփական պահանջարկը և փոխանցել էլեկտրաէներգիայի ավելցուկը էլցանցին:



Նկար 11 – Տեղանքում գտնվող 500կՎտ արևային էլեկտրակայան

300 կՎտ դրվածքային հզորությամբ երկրորդ ՖՎ կայանը շահագործվում է ցանցից դուրս ռեժիմով, այսինքն՝ այն ինտեգրված չէ ցանցին, և կայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան սպառվում է ֆերմայում:

ՖՎ կայանների տեղադրման շնորհիվ ընկերությանը հաջողվել է կրճատել իր տարեկան էլեկտրաէներգիայի սպառումը ցանցից մոտ 850.000 կՎտժ-ով: Միաժամանակ ընկերությանն անհրաժեշտ է լրացուցիչ 1 ՄՎտ հզորություն՝ բավարարելու ֆերմայի էլեկտրաէներգիայի պահանջարկը: Այս պահանջարկը հնարավոր է ապահովել

ընկերության ցանցից դուրս նոր ՖՎ կայանի տեղակայման շնորհիվ:

3.2.2. Ջերմության պահանջարկ

Բնական գազն օգտագործվում է թոչնանոցների ջեռուցման և սպանդանոցում տաք ջրի պատրաստման (հիմնականում մաքրման) նպատակով: Հետևաբար, տեղում տեղադրվել են գազի կաթսաներ: Բնական գազի միջին արժեքը կազմում է մոտ 139 դրամ/մ³ (0,265 եվրո/մ³):

Թոչնատները ջեռուցվում են առանձին տեղակայված 45կՎտ (20 տաքացուցիչ) և 75կՎտ (132 տաքացուցիչ) հզորությամբ ինքնակարգավորվող գազատաքացուցիչներով: Ֆերմայում առկա ջեռուցման համակարգերի, ներառյալ վերը նշված տաքացուցիչների, ինչպես նաև գազի մի քանի կաթսաների ընդհանուր դրվածքային հզորությունը 17.2 ՄՎտ է:

Բրոյլերների դեպքում ջեռուցման ռեժիմը հետևյալն է՝ 33°C ջերմաստիճան շաբաթական աստիճանաբար 2-3°C նվազեցմամբ: Թոչնատներում պահպանվող միջին ջերմաստիճանը ձմռանը և ամռանը 27°C է, ձմռանը մեծ սպառումով, իսկ ամռանը համեմատաբար ցածր սպառմամբ (հիմնականում գիշերային ժամերին):



Նկար 12 – Գազի ուղիղ մատակարարմամբ ջեռուցիչներ (օրինակ)

Ֆերմայի շրջակայքում ջերմային էներգիայի այլ սպառողներ չկան, և նպատակահարմար չէ կազմակերպել մերձակա բնակավայրերի կենտրոնական ջեռուցումը:

4. ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

4.1. ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՆՔ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

4.1.1. Ծրագրի տեղանք

Թոշնատների և մնացած շինությունների տեղադրությունը, ինչպես նաև կենսագազի էլեկտրակայանի կառուցման ընկերության կողմից առաջարկված տարածքը ներկայացված



Է ստորև նկարում՝
Գրություն

Գլխավոր մուտքի մոտ գտնվող հսկիչ կետ

Ֆերմայի 10 կՎ ենթակայան

ԲԷՑ–ի 35 կՎ ենթակայան

Սպանդանոց և այլ շինություններ

Կեղտաջրերի վերամշակման կայան (ապամոնտաժված)

300կՎտ ցանցից դուրս ՖՎ կայան սեփական օգտագործման համար

500կՎտ ցանցին միացվող ՖՎ կայան սեփական սպառման համար

Նախատեսված է կենսագազի կայանի կառուցման համար

Չվատու հավերի թոշնաղբի պահեստավորում

Բրդյլեր հավերի թոշնաղբի պահեստավորում

Բրդյլեր հավերի թոշնատներ

Չվատու հավերի թոշնատներ



Կենսագազի կայանի կառուցման համար նախատեսված հողատարածքը գտնվում է ֆերմայի հարավ-արևմտյան հատվածում: Մոտ 16 հա հողատարածքը գտնվում է պարսպի հարևանությամբ և ֆերմայի կողքով անցնող երկաթուղու երկայնքով: Տեղանքում կա 10 կՎ ենթակայան, ենթակառուցվածքները ներկայումս չեն շահագործվում և հիմնականում ապամոնտաժվել են կեղտաջրերի մաքրման կայանի և ծղոտով խառնված թոշնի

Թափոնների բաց պահեստի:



Նկար 13 –Կոյուղաջրերի վերամշակման նախկին կայան (ձախից) և պինդ թռչնաղբի պահեստարան (աջից)

Կենսագազի կայանի կառուցման համար նախատեսված տարածքը ներկայումս ամայի է, խոտածածկ (հիմնականում *Scirpus*՝ եղեգով): Տարածքի մի մասը ծածկված է շինարարական աղբով, որը մնացել է նախկինում շահագործվող ենթակառուցվածքներից, այդ թվում՝ կոյուղու մաքրման կայաններից, ինչպես նաև չօգտագործվող, խարխուլ շենքերի ապամոնտաժումից:

Հողատարածքը պատկանում է ֆերմային: Գոտին համարվում է արդյունաբերական՝ առանց շինարարական հատուկ սահմանափակումների:

Ֆերման ունի լավ զարգացած ներքին ճանապարհային ենթակառուցվածք, որը թույլ է տալիս մուտք գործել կենսագազի կայանի տարածք մի քանի ուղղություններից: Տեղանքից մոտ 150-200 մ հեռավորության վրա է գտնվում 35 կՎ ենթակայանը, որը միացնում է ֆերման էլեկտրացանցին:



Նկար 14 – Կենսագազի կայանի համար նախատեսված հողատարածքի նկարներ

4.1.2. Ենթակառուցվածքներ

Էլեկտրաէներգիայի մատակարարում

Ֆերման սնվում է 35/10 կՎ ենթակայանից, որը պատկանում և շահագործվում է ազգային օպերատոր՝ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» ՓԲԸ-ի կողմից: Ենթակայանը գտնվում է ֆերմայի տարածքում՝ կենսագազի կայանի կառուցման համար նախատեսված հողամասի մոտ:

Ընկերությանը պատկանում են տասնհինգ 10/0.4 կՎ ենթակայաններ կան, որոնք գտնվում են ֆերմայի ամբողջ տարածքում: Այդ ենթակայանները էլեկտրաէներգիա են մատակարարում թռչնանոցներին և մնացած շինություններին: Ենթակայանները միացած են ստորգետնյա և վերգետնյա էլեկտրահաղորդման գծերով:

Ջրամատակարարում

Տեղանքում առկա է տեխնիկական ջրամատակարարում, և այդ համակարգի առկա հզորությունները բավարար են կենսագազի կայանի շահագործումն ապահովելու համար: Կան նաև ջրամատակարարման այլ աղբյուրներ ևս (արտեզյան հորեր՝ հագեցած պոմպերով) և բոլորը գտնվում են ֆերմայի տարածքում:

Կեղտաջրեր

Տեղանքում կոյուղու համակարգ չկա (կոյուղու ծառայություններ մատուցողի հետ պայմանագիր չի կնքվել): Ֆերմայում գոյացած կեղտաջրերը թափվում են մոտակա ջրանցք:

Հասանելիություն

Գոյություն ունեն 6 այլ մուտքի ճանապարհներ դեպի ֆերմա, իսկ ամենամոտ ճանապարհը կարող է օգտագործվել սարքավորումները ծրագրի տեղանք տեղափոխելու համար: Հիմնական մուտքի ճանապարհը թույլ է տալիս մինչև 24 տոննա բեռնատարների տեղաշարժ: Տեղանքն ունի նաև ներքին ճանապարհային ենթակառուցվածք, որն ապահովում է մուտք դեպի տարբեր հասվածներ և շինություններ:

4.2. ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ԼՈԳԻՍՏԻԿԱ

Կենսագազի կայանի համար օգտագործվող հիմնական հումքը Արաքսի թռչնաղբն է: Թռչնաղբը ներկայումս պահվում է բաց վիճակում, հեռու տարածքում, մոտ 6 ամիս: Թռչնաղբը վաճառվում է 1տոննան մոտ 10,000 դրամով (19-20 եվրո/տոննա): Կայանի կայուն աշխատանքի համար անհրաժեշտ է համարժեք հումք: Ներկայումս այս առաջադրանքի համար դիտարկվող թռչնաղբը կազմում է 70%: Այդ պատճառով էլ եզրիպատագործների սիլոսը կամ բուսական մնացորդները նույնպես հարմար են այդ նպատակի համար: Ջերմոցներին ուղղված հարցումների արդյունքում «Սպայկա»-ն հաստատել է իրենց ջերմոցներից լոլիկի/վարունգի մնացորդների առկայության մասին: Հումքի առկա քանակները ներկայացված է հետևյալ կերպ՝

Աղյուսակ 3 – Ծրագրի համար առկա հումք

Քանակ [տ/տ]	Նկարագրություն	Խոնավություն [%]
----------------	----------------	---------------------

Առաջադրանք 3 – Կենսագանգվածի մատակարարումների գնահատում
Առաջադրանք 4 – Պահանջվող աջակցության և դասընթացների համառոտ նկարագրություն
Առաջադրանք 5 – Արդյունքների ցուցանիշների որոշում

18,000	Զվատու հավի աղբ	46
7,200	Բրոյլեր հավի աղբ	74
5,000	Լոլիկի և վարունգի մնացորդներ	92

Այս ուսումնասիրության համար օգտագործվել են հայտնի հետևյալ մեծությունները, քանի որ առկա հումքի վերաբերյալ մանրամասն վերլուծություն առկա չէր:

Աղյուսակ 4 – Հումքի գիտական վերլուծություն

	DS [m %]	VS [m %]	C [m %]	N [m %]	S [kg/m ³ FM]
Լուրիկի և վարունգի մնացորդներ թռչնաղբ	92%	83%	37,3%	1,8%	0,54
	43%	78%	21,6%	5,5%	

Ձվատու հավերի թռչնաղբը առաջանում և հավաքվում է ամեն օր, որն ուղղակիորեն կարելի է տեղափոխել կայան բեռնատարով: Բրոյլերների արտադրության արդյունքում թռչնաղբը հավաքվում է ցիկլի վերջում (~11 շաբաթ): Այդ քանակը կարող է պահեստավորվել և տեղափոխել կայան: Լուրիկը և վարունգը հասանելի են բերքահավաքից հետո: Արաքսի և Սպայկայի միջև հեռավորությունը մոտ 30 կմ է: Անհրաժեշտ կենսազանգվածը հնարավոր է կանոնավոր կերպով տեղափոխել ծրագրի իրականացման տեղանք բեռնատարներով:


4.3. ԿԵՆՍԱԳԱՉԻ ԿԱՅԱՆ

4.3.1. Ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կենսագազի կայան

Դիտարկող պրոցեսը հիմնված է մեկ փուլով ընթացող կենսազանգվածի թաց մամլման վրա, ինչն ապահովում է կայանի կայուն աշխատանքը: Թարմ թռչնաղբը ուղղակիորեն լցվում է խառնիչ բաքի մեջ: Բրոյլերի աղբը, ինչպես նաև լուրիկի և վարունգի մնացորդները մատակարարվում են անընդմեջ և պահվում են հումքի համար նախատեսված պահեստում: Բալանսավորված քանակը լցվում է խառնիչ բաք և ավելացվում է տեխնոլոգիական ջուր: Քանի որ թռչնաղբն ունի ազոտի բարձր պարունակություն, ապա անհրաժեշտ է նաև ածխածնով հարուստ հումք:

Եգիպտացորենի սիլոսը հաճախ է օգտագործվում կենսագազի կայաններում, սակայն այս դեպքում առկա են լուրիկի և վարունգի մնացորդներ, որոնք էլ կարող են օգտագործվել որպես հումք: Չոր զանգվածի պարունակությունը՝ <10%, որի նպատակն է մասսան/խյուսը պիտանի դարձնել դուրս մղելու համար: Այն տեղափոխվում է թաց կաթսաներով, որոնց վրա տեղադրված են պոմպեր: Անընդմեջ աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ են 2 մամլիչ կաթսաներ՝ յուրաքանչյուրը 7800 մ³ ծավալով: Հումքի քայքայումը տեղի է ունենում մամլիչներում: Մամլող կաթսաներն աշխատում են անընդմեջ մոտ 40°C ջերմաստիճանում, ինչը նպաստում է կենսագազի արտադրությանը: Մամլող կաթսաները ծածկված են հերմետիկ երկշերտ թաղանթով, որը համարվում է գազի պահեստ: Արտադրված կենսագազի նոմինալ հզորությունը կազմում է 2,6 ՄՎտ կամ մոտ 431 մ³/ժ: Մոտ 30 օր պահելուց հետո մամլված մասսան պոմպի միջոցով մղվում է պահեստավորման բաք և առանձնացվում էքստրուդերով: Ապա լցվում է տեխնոլոգիական ջուրը առաջացած մասսան նոսրացնելու համար, իսկ ֆիլտրատը պահվում է հատուկ ռեզերվուարի մեջ: Ֆիլտրված մասսան կարող է օգտագործվել դաշտերում՝ որպես պարարտանյութ: Պրոցեսի

պայմանական սխեման ներկայացված է ստորև նկարում՝



Նկար 15 – Կենսագազի կայանի սխեմատիկ պատկեր (աղբյուր՝ Կենսագազի ուղեցույց, էջ 62)

Կենսագազը պարունակում է մեծ քանակությամբ ծծումբ, որի քանակությունը պետք է կրճատվի մաքրող սարքի միջոցով: Մաքրված կենսագազը սեղմվում և օգտագործվում է համակցված արտադրության /CHP/ համար: Այդ նպատակով դիտարկվել են Jenbacher **Inio J312 CHP 2** կայաններ: Դրանք նախագծվել են կենսագազով շահագործման համար, իսկ CHP-ի նոմինալ պարամետրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Աղյուսակ 5 – Innio Jenbacher J312 CHP կայանների նոմինալ տվյալներ


Տեսակ	CHP հզորություն		Արդյունավետություն [%]
	Innio Jenbacher J312		
Էներգիայի ներդրում/սպառում	1,315	կՎտ	84,1
Էլեկտրական հզորություն	548	կՎտ	41,7
Ջերմային հզորություն	558	Կվտ	42,4

Դիտարկվող կենսագազի կայանի հիմնական բաղադրիչներն են՝

- 1 խառնիչ բաք (400մ³)
- 2 կաթսա (2 x 8,000մ³)
- 1 Ֆիլտրատի պահեստավորման բաք (8,000մ³)
- 1 ռեզերվուար (1,500մ³)
- 1 ջրի պահեստավորման բաք (400մ³)
- 2 CHP կայան (2 x 550kW)

Ներկայացված ծրագրի հնարավոր դասավորության պլանը ներկայացված է հետևյալ նկարում:

Այսպիսով, պահանջվում է մոտ 1 հա ընդհանուր տարածք:



Նկար 16 –Պտտենցիալ ծրագրի նախագիծ

Կայանը պետք է շահագործվի վերապատրաստված և փորձառու մասնագետի կողմից, որը պատասխանատու կլինի կայանի շահագործման և պահպանման համար: Կայանը աշխատելու է լիովին ավտոմատ, սակայն անհրաժեշտ կլինի պրոցեսի հսկողություն: Կայանի բաղադրիչների և CHP-ի սպասարկումն իրականացվելու է տեխնոլոգիայի մատակարարների/փորձառու գործընկերների կողմից: Հեղուկ ֆիլտրարը կարող է հետագայում որպես պարարտանյութ վաճառվել այլ տնտեսությունների:

4.3.2. Գազի ուղիղ օգտագործմամբ կենսագազի կայան

Դիտարկվում է նաև Արաքս թռչնաբուծական ֆերմայի կենսագազով շահագործման տարբերակը: Տեղադրված ջեռուցիչները կենսագազով շահագործելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ մանրամասն վերլուծություն (օրինակ՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, արտանետումներ և այլն): Ներկա պահին, ակնկալվում է, որ բնական գազը կարող է փոխարինվել կենսագազով առանց որևէ զգալի աղապտացիոն միջոցառումների անցկացման: Այդ դեպքում կենսագազի կայանի հզորությունը կկրճատվի CHP կայանի հզորության մինչև 30%-ը՝ ամռանը գազի ցածր պահանջարկի պատճառով:

Այս ծրագրի հիմնական տեխնիկական բնութագրերը՝

- Նոմինալ հզորություն 800կՎտ – 130 մմ³/ժ կենսագազ
- 120 մ³խառնող բաք
- 2x 1,900մ³ կաթսաներ
- 1,900 բուֆերային պահեստավորման բաք
- 600մ³ ռեզերվուար

4.4. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄՊԱՌՈՂՆԵՐ

4.4.1. Էլեկտրաէներգիա

Կայանի էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարվում է արտադրված էլեկտրաէներգիայով: Ավելցուկը մատակարարվում է Արաքս ֆերմա, կամ փոխանցվում է էլեկտրական ցանց: Արաքսի էլեկտրաէներգիայի պահանջարկը կրճատվել է վերջին տարիներին 2 ֆոտովոլտային կայանների տեղակայման շնորհիվ, որոնք որոշ չափով բավարարում են պահանջարկը: Բացի այդ, կենսագանգվածի էլեկտրաէներգիայի սակագինը ավելի բարձր է, քան սպառման գինը: Եվ այս վերանայված սակագնով էլեկտրաէներգիան մատակարարվում է էլեկտրական ցանց: Համակցված կայանների համար նախատեսվում է 10 կՎ տրանսֆորմատոր:


4.4.2. Ջերմություն

Համակցված /CHPs/ կայաններում արտադրվում է միջին և ցածր ջերմաստիճանի ջերմություն: Տաք ջրամատակարարման ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 105°C: Հնարավոր է տաք ջրօգտագործման կամ ջրի վրա հիմնված ջեռուցման համակարգեր ջուրը մատակարարվի այսպիսի ջերմաստիճանով: Ընդհանուր տեղակայված ջերմային հզորությունը կազմում է 17,2 ՄՎտ: Դրանից մոտ 10,8 ՄՎտ-ն թռչնանոցների տաքացուցիչներ են, իսկ մնացածը անհայտ է:

Հիմնվելով ամառային սեզոնին ջերմության ամսական պահանջարկի վրա՝ առկա է ջուրը 400 կՎտ ջերմության անընդհատ պահանջարկ: Դա կարող է լինել կամ տաք ջրի պատրաստում կամ թռչնանոցների օդափոխություն: Մանրամասն ծավալները պետք է որոշվեն ծրագրի հաջորդ փուլերի ընթացքում, հետևաբար այս հաշվետվության մաս չեն Առաջադրանք 3 – Կենսագանգվածի մատակարարումների գնահատում

կազմում: Առկա ջեռուցման համակարգի տաք ջրի համար ավելի քիչ հզորություն է պահանջվում և, հետևաբար, այս լուծումը նախընտրելի է:

